ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

(ՇՁԲ-11/303)

Օբյեկտի պահպանության իրականացման մասին

ք.Երևան

10.01.14թ.

«Հայաստանի Հանրապետության վերհսկիչ պալատի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ա. Ներսիսյանի (այսուհետ՝Պատվիրատու) մի կողմից և ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ Կենտրոնականի պահպանության բաժնը, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, ի դեմս բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Խաչատրյանի (այսուհետ՝Կատարող) մյուս կողմից, (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1Սույն պայմանագրով Կատարողը շարունակում է ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմի Վարդանանց փակուղի թիվ 8շենքի, թիվ 3 վարձակալած տարածքի (այսուհետ՝ Օբյեկտ) պահպանությունը՝ՀՀ Ոստիկանության մասին օրենքի համապատասխան դրույթների շրջանակներում, որոնք վերաբերում են պետական մարմիններին (այսուհետ՝Ծառայություն),

1.2.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից որևէ մեկը մյուսին գրավոր չի հայտնել այն դադարեցնելու մասին:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

2.1 ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

2.1.1. Անհրաժեշտ պայմաններ ստեղծել Օբյեկտի պահպանությունը պատշաճ իրականացնելու համար,

2.1.2 Սահմանված կարգով իրականացնել անցագրային ռեժիմը և Օբյեկտի հանձնումն ու ընդունումը,

2.1.3. Օպերատիվ միջոցներ ձեռնարկել՝ Օբյեկտի տեխնիկական ամրացվածության վիճակի հետազոտման մասին Կատարողի կազմված ակտ(եր)ում արձանագրված թերությունները նախատեսված ժամկետներում վերացնելու ուղղությամբ,

2.1.4Ժամանակին կատարել, Օբյեկտի պահպանության իրականացման համար, սույն պայմանագրով ֆիքսված գումարների (հավելված1) եռամսյակային կտրվածքով փոխանցումները (հավելվա2),

2.1.5 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Ծառայության մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,

2.1.6 Ազդանշանային համակարգում խափանում առաջանալու դեպքում Կատարողից պանջել անհապաղ վերացնել այն և անհրաժեշտ միջոցներ ձեռնակել կրկնումը բացառելու համար,

2.1.7 Սույն պայմանագրի 1.1 կետի պահանջը լիարժեք չիրականացնելու միջադեպը կրկնվելու դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել Կատարողին,

2.1.8 Վարձակալական պայմանագրի դադարեցումից երկու շաբաթ առաջ Կատարողին գրավոր հայտնել սույն պայմանագրի լուծման մասին:

2.2 ԿԱՏԱՐՈՂ

2.2.1. Կազմակերպել և ապահովել Օբյեկտի հուսալի պահպանությունը՝ սույն պայմնագրի 1.1 կետի պահանջներին համապատասխան,

2.2.2 Օբյեկտում արտակարգ իրավիճակ առաջանալու կամ տագնապի դեպքում այնտեղ հասնել 5-6 րոպեում,

2.2.3 Օբյեկտի փակ պահատեղերում հրդեհի վտանգավոր նշանների հայտնաբերման և ստացված տագնապի մասին անհապաղ հայտնել հակահրդեհային ծառայությանը, Պատվիրատուին և վարձատուին՝ միաժամանակ, ձեռնամուխ լինել դրա լիկվիդացմանը,

2.2.4 Ապահովել Պատվիրատուի սահմանած անցագրային ռեժիմի կիրառումը, եթե կան թերություններ կամ բացթողումներ շտկել և այդ մասին իրազեկել (բանավոր կամ գրավոր) Պատվիրատուին,

2.2.5 Անհրաժեշտության դեպքում օպերատիվ կարգով լուծել Օբյեկտի պահպանության ազդանշանային միջոցների նորմալ շահագործման, սպասարկման և անսարքությունների հետ կապված խնդիրները,

2.2.6 Պատվիրատուի պատասխանատու աշխատակց(ներ)ին ծանոթացնել Օբյեկտի հանձնման և ընդունման կարգին, անվտանգության տեխնիկայի կանոններին, եթե վերջիններիս կողմից իրենց պարտականությունների կատարման ժամանակ նկատվեն թերություններ ու բացթողումներ շտկել, իսկ նույնը կրկնվելու դեպքում այդ մասին իրազեկել (բանավոր կամ գրավոր) Պատվիրատուին,

2.2.7 Ոչ աշխատանքային ժամերին Օբյեկտից նյութական որևէ արժեք(ներ)ի անհատանալու դեպքում, Կատարողից պահանջել անմիջապես անցկացնելու համատեղ գույքագրում և հետևել գործընթացին՝ իր իրավասության շրջանակներում,

2.2.8 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն անհնարին դառնալու դեպքում մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1Յուրաքանչյուր օր, աշխատանքի վերջում Պատվիրատուի վստահված աշխատակիցը զանգահարում է Կատարողի հերթապահ մաս և տվյալ օրվա եշանաբանը(թվերով) ճիշտ հայտնելուց հետո Օբյեկտը հանձնում է պահպանության,

3.2Հաջորդ օրը առավոտյան՝ աշխատանքը սկսվելուց առաջ, մինչև Օբյեկտի մուտքի դռան բացելը Պատվիրատուի վստահված անձը զանգահարում է Կատարողի հերթապահ մաս և իրազեկում Օբյեկտի բացման մասին:

4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

4.1Սույն պայմանագրով Կատարողի Ծառայության ընդհանուր գինը 2014թ. ընթացքում կկազմի 420 000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ,

4.2 Յուրաքանչյուր եռամսյակի ավարտին հաջորդող օրը (եթե աշխատանքային չէ՝ նախորդ օրը)Կողմերի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելուն պես, երկու օրվա ընթացքում , Կատարողի տրամադրած հաշվեգրի հիման վրա, 10-օրյա ժամկետում, Պատվիրատուն, ըստ հավելված 2-ի ,գումարը կփոխանցի Կատարողի հաշվարկային հաշվին:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կողմերը ՀՀ օրենսդրության շրջանակներում պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների անթերի կատարման համար,

5.2Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցվող Ծառայությանը սույն պայմանագրի 1.1 կետին համապատասխան իրականացնելու որակի համար, հակառակ դեպքում նրանից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի չափով,

5.3 Սույն պայմանագրի 2.2.3 կետը անհիմն խախտելու դեպքում Կատարողից գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի չափով,

5.4 Սույն պայմանագրի 2.2.5 կետի պահանջը անհիմն ձգձգելու պարագայում Կատարողի նկատմամբ կիրառվում է տույժ՝տվյալ եռամսյակի գումարից 00,5% չափով պակաս փոխանցելով,

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.1.3 և 2.1.4կետերով նախատեսված պարտավորությունները պատշաճ չկատարելու դեպքում Պատվիրատուից, ի հօգուտ Կատարողի, գանձվում է սույն պայմանագրի գնի 0,5%-ի չափով տուգանք,

5.6 Կատարողի ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով նյութական արժեք(ներ)ի կորուստի դեպքում(ոչ աշխատանքային ժամերին), իրավասու մարմնի համապատասխան եզրահանգումից հետո, տվյալ եռամսյակի գումարը Կատարողին կփոխանցի պատճառված վնասի չափով պակաս,

5.7 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

5.8 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

Սույն պայմանագրով պարտավորությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որ Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել այն: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով(համաձայնագրով) պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության, ինչպես նաև՝ սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության,

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհամարվի սույն պայմանագրի անբաժանելի մասը,

7.3Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ,

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով,

7.5 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ,

7.6 Սույն պայմանագրի թիվ 1 և 2 հավելվածները, համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ	ՀՀՈ ՊՊԳՎ Կենտրոնական պահպանության բաժին
ք. Երևան, Բաղրամյան 19	ք.Երևան Մյասնիկյան պող.1/4
ԿԳ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 00061508	Հ/Հ 90001322901
հհ90003154500[illegible]	ՀՎՀՀ [illegible]
Աշխատակազմի ղեկավար	[illegible] գնդապետ
[illegible] Մ. Ներսիսյան	[illegible] Մելքոնյան

Հավելված N 1

25.03.14թ

թիվ ԾՁԲ-11/303 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2014թ.-ին կատարվելիք պահպանության ծառայության

N	Գնման ենթակա առարկաների			Ըստ ամիսների գնման ենթակա քանակները				Ընդամենը	
	Անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը (դրամ) (ՀՀ դրամ)	1ին	2ին	3ին	4ին	քանակ	գումար (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6	7	8	10	11
2	պահպանության ծառայություն		105000	1	1	1	1	4	420000
	ԸՆԴԱՄԵՆԸ		105000						420000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ
ք. Երևան, Ռեդիսոնյան 19
ԿԳ գործառնական վարչություն
հ/հ 900011345069
ՀՎՀՀ 00061508
Աշխատակազմի դիմումների
Ա. Ներսիսյան

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀՀՈ ՊՊԳՎ Կենտրոնական
պահպանության բաժին
ք.Երևան Մյասնիկյան պող.1/4
ՖՆ գործառնական վարչություն
հ/հ900013229019
ՀՎՀՀ 02506565
Բաժնի պետ,ոստ.գնդապետ
Ա.Մխիթարյան

Հավելված N 2

25.03.14թ. կնքված
թիվ ԾՁԲ-11/303 գնման համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման ենթակա առարկաների		Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ. պետական բյուջեից			
N	Անվանումը	1 ԵՌ	2 ԵՌ	3 ԵՌ	4 ԵՌ
1	2	3	4	5	6
2	պահպանության ծառայություն	105000	105000	105000	105000
	ԸՆԴԱՄԵՆԸ				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ վերահսկիչ պալատի աշխատակազմ
ք. Երևան,Քաջարենյան 19
ԿԳ գործառնական վարչություն
հ/հ 900011545069
ՀՎՀՀ 00061508
Աշխատակազմի ղեկավար

Ա. Խնդսիրյան

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀՀՈ ՊՊԳՎ Կենտրոնական
պահպանության բաժին
ք.Երևան Մյասնիկյան պող1/4
ՖՆ գործառնական վարչություն
հ/հ900013229019
ՀՎՀՀ 02506565
Բաժնի պետ ,ռստ.գնդապետ

Ա.Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պահպանության տակ ընդունվող օբյեկտի հետազոտման

«_10_» __12__ 2015 թ.

Մենք՝ ՀՀՀՈ ՊՊԳՎ Կենտրոնական պահպանություն բաժնի պահպանության ավագ տեսուչ ոստիկանության մայոր Է. Ջանվելյանս, ինժեներ Ա. Պետրոսյանս

(ակտ կազմողների ստորագրաժանման անվանումը, պաշտոնները, կոչումները, Ա.Հ.Ա.)

Տնտ.մարմնի ներկայացուցիչ *աշխատակազմի ղեկավար՝ Ա.Ներսիսյան*

(կազմակերպության տեսականումը, ներկայացուցչի պաշտոնը, Ա.Հ.Ա.)

1. Օբյեկտի լրիվ անվանումը *«ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ»*

2. Օբյեկտի հասցեն *Վարդանանց փակուղի, թիվ 8 շենք, թիվ 3 վարձակալած տարածք*

3. Օբյեկտի ընդհանուր նկարագրությունը *գտնվում է 3-րդ հարկում, պատերը հիմնական են, պատուհանները և մուտքի դուռը ապակեպատ են, փականը գործում է նորմալ:*

(Պահպանվող օբյեկտն ինչպիսի շենքային պայմաններում է գտնվում (նշել նաև պիտանելիությունը նյութական արժեքների պահպանման համար)

ա) պարիսպները

դարպասները

զ) տարածքի գիշերային լուսավորությունը *բավարար է:*

դ) հսկիչ անցագրային կետի առկայությունը և կահավորվածությունը

ե) Անձնական իրերի գննման սենյակ

զ) Դռների, պատուհանների, փականքների, վանդակաճաղերի,պատերի,հատակի, առաստաղի տեխնիկական նկարագիրը և վիճակը *օբյեկտի պատերը հիմնական են, պատուհանները և մուտքի դուռը ապակեպատված են, փականը աշխատում է նորմալ:*

4.Պահպանության ձևը և աշխատակիցների քանակը (ոստիկանության, ռազմականացված,) *ԿՊԴ–ի միջոցով:*

5.Անվտանգության համակարգի տեխնիկական նկարագիրը և վիճակը (*հագեցվածությունը և նրանց վիճակը, արտաքին կապերը) օբյեկտում տեղադրված էլ.սահազանգման շարժման, ջարդման և բացման տվիչները աշխատում են նորմալ:*

6.Օբյեկտի հրդեհաշիջման սկզբնական միջոցներով հագեցվածությունը *օբյեկտում տեղադրված էլ. սահազանգման հակահրդեհային տվիչները աշխատում են նորմալ:*

7. Օբյեկտը պահպանության տակ ընդունելու և հանձնելու կարգը _____

_____

_____

8.Այլ թերություններ _____

_____

_____

Առաջարկություններ

ա) Տնտ. մարմնի համար _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

բ) պահպանության ստորաբաժանման համար _____

_____

_____

_____

_____

_____

Թվարկված առաջարկություններն ակտում նշված ժամկետում չվերացնելու դեպքում պահպանությունը պատասխանատվություն չի կրում տնտ. մարմնի կողմից պայմանագրային պարտականությունների չկատարման համար։

Ակտ կազմողների ստորագրությունները

1.Պահպանության ներկայացուցիչ _____ Է. Զանվելյան
ստորագրություն ազգանուն

_____ Ա. Պետրոսյան
ստորագրություն ազգանուն

2. Տնտ. մարմնի ներկայացուցիչ _____ Ա.Ներսիսյան
ստորագրություն ազգանուն

Արձանագրության օրինակը ստացա _____ _____
ստորագրություն ազգանուն

Կ.Տ.

«10» 12 2015 թ.